



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2016թ. թիվ 539-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ
ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի №934-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման ժամանակացույցի» 32-րդ կետի՝ 2017 թվականի ապրիլին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում պլանավորված քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատմանը նախապատրաստվելու նպատակով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Սահմանել 2017 թվականի ապրիլին կայանալիք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատմանը նախապատրաստման Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարահանման հանձնաժողովների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված ցանկում ընդգրկված մարմինների ղեկավարներին առաջարկվում է՝ մինչև 2017 թվականի փետրվարի 10-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել՝

1) տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի №12.6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և

տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման կարգով» սահմանված չափանիշներին համապատասխան պատրաստվածության և առկա թերությունների վերաբերյալ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի №633-Ն որոշման 1-ին կետով սահմանված «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգի» և 2011 թվականի օգոստոսի 18-ի №1180-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգի» պահանջներին համապատասխան ճշգրտված «Քաղաքացիական պաշտպանության պլանը» և «Տարահանման պլանը» իրենց ճշգրտման թերթիկով՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Կ.Հովհաննիսյանին՝

1) ամփոփել և վերլուծել սույն որոշման 2-րդ կետով ներկայացված տեղեկատվությունը և մինչև 2017 թվականի մարտի 1-ը մշակել առաջարկություններ՝ թերությունների վերացման ուղղությամբ.

2) ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն սույն որոշման 1-ին կետով սահմանված ցանկում ընդգրկված մարմիններին՝ առկա թերությունների վերացման և քաղաքացիական պաշտպանության վիճակի գնահատմանը պատրաստ լինելու ուղղությամբ.

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2017 թվականի մարտի 31-ը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2016թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ